Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվանN1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի <<Երաժշտություն>> առարկայի (3 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
-հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն:
Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝2024թ. դեկտեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 18-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00- 15:00, բացի շաբաթ,կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:
Մրցույթը տեղի կունենա **2024 թ. դեկտեմբերի 24-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղի Ս. Մակարյանի անվան N1միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Գ. Դարբինյան փող. 15:
Տեղեկությունների համար զանգահարել (093)203500 հեռախոսահամարով:

X

ՀԱՅԿ ՄՈՒԴՈՅԱՆ

Դպրոցի տնօրեն ՝